



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA

HEAD OF STAFF

МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն  
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia  
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3  
Էլ. փոստ /E-mail/ эл. почта: e.pirumyan@mnp.am  
Web page: www.mnp.am  
☎ (374 10) 58 54 19  
☎ (374 10) 54 08 57

№ 5/12.1/51873

<<30>> 06 2014 թ.

Իջևանի <<Օրհուս>> կենտրոնի  
համակարգող Դ. Ղազարյանին

Հարգելի պարոն Ղազարյան

Ի պատասխան Ձեր 2014թ. հունիսի 17-ի գրության, հայտնում եմ, որ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված կարգով <<Ջուրլույս>> ՍՊԸ-ի կողմից շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացված <<Իջևան-1>> ՓՀԷԿ-ի նախագծային փաստաթղթերը ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի 12.03.2014թ. N5/33/50651 գրությամբ տրամադրվել է ՀՀ Տավուշի մարզի Իջևանի քաղաքապետարանին և դեռևս պատասխան չի ստացվել:

Վերոնշյալ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ եթե սահմանված ժամկետում ոչ մի կարծիք չի ներկայացվում լիազորված մարմին, ապա համարվում է, որ փաստաթղթերի վերաբերյալ բացասական կարծիք չկա:

Միաժամանակ հայտնում եմ, որ 2014թ. ապրիլի 10-ին, ժամը 12<sup>00</sup>-ին Իջևան քաղաքի Մելիքբեկյան փող. 5/9 հասցեում տեղի է ունեցել վերոնշյալ ՓՀԷԿ-ի փաստաթղթերի վերաբերյալ հասարակական լսում, ինչի վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է <<Հայաստանի Հանրապետություն>> օրաթերթի 26.03.2014թ. համարում և տեղադրվել ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքում: Հասարակական լսման մասին 25.03.2014թ. տեղեկացվել է Իջևանի քաղաքապետարանը:

2014թ. հունիսի 18-ին ժամը 12<sup>00</sup>-ին տեղի ունեցած լիազորված անձի մասնագիտական եզրակացության հասարակական լսման տեղի և ժամի մասին 06.06.2014թ. ՎԱ-33/238 գրությամբ ծանուցվել են ՀՀ Տավուշի մարզի Իջևանի քաղաքաքապետը, <<Ջուրլույս>> ՍՊԸ-ի տնօրենը և լիազորված անձը:

Համապատասխան հայտարարությունը հրապարակվել է վերոնշյալ օրաթերթի 06.06.2014թ. համարում և տեղադրվել ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքում:

Հարգանքով

  


Է. Փիրումյան

Ա. Վարդանյան  
523835

